5373

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«08» 05 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 121 - 25

Նախաձեռնող՝ «ԴԱՎԱ ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ
Վաղարշապատ, Խորենացի փ. 68

Գործունեությունը՝ Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Ջանֆիդա տեղամասից օգտակար հանածոների արդյունահանում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 121 - 25

«08» մայիսի 2025 թ.

«ԴԱՎԱ ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ջանֆիդա տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԴԱՎԱ ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք Ջանֆիդա բնակավայր

Ներածական մաս. «ԴԱՎԱ ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ջանֆիդա տեղամասից (այսուհետ՝ տեղամաս) իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Հայցվող տարածքի մակերեսը 8,5 հա է: Ըստ հաշվետվությունում նշված տեղեկատվության՝ հայցվող տարածքի 04-083-0201-0055 ծածկագրով հողամասի մակերեսը կազմում է 4,0609 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն, 04-083-0201-0054 ծածկագրով հողամասի մակերեսը՝ 0,3 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն և 04-083-0201-0045 ծածկագրով հողամասի մակերեսը՝ 4,8443 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Հանքավայրը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջանֆիդա բնակավայրի վարչական տարածքում և համարվում է Արարատյան դաշտավայրի մաս: Հայցվող տարածքը Ջանֆիդա բնակավայրից գտնվում է 125 մ, Նոր Արտագերս բնակավայրից՝ 1200 մ հեռավորության վրա: Հայցվող տարածքի արևմտյան մասով մոտ 30,5 մ հեռավորությամբ անցնում է S-3-17 Արմավիր գ. Ջանֆիդա տեղական նշանակության ասֆալտապատ ճանապարհը: Բացահանքի շրջակայքում առկա են գրունտային (դաշտամիջյան) ճանապարհներ, որոնք օգտագործվել են ԽՍՀՄ ժամանակներից: Արտադրական հրապարակի հեռավորությունը մոտակա բնակելի տնից գտնվում է 380 մ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասի լեռնատեխնիկական պայմանները պարզունակ են, հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը գտնվում է Արարատյան ջրավազանում: Հիդրոերկրաբանական պայմաններն ուսումնասիրվել են երկրաբանական աշխատանքներին զուգահեռ, որի արդյունքում պարզվել է գրունտային ջրերի առկայությանը լեռնային փորվածքներում և հորատանցքերում:

Ըստ հաշվետվությունում նշված տեղեկությունների՝ հանքավայրի տարածքում սողանքային երևույթները բացակայում են:

Ըստ հաշվետվության՝ հայցվող տեղամասում կարմիրգրքյան բույսեր և կենդանիներ չեն դիտարկվել: Տեղամասում անտառածածկ տարածքներ ևս չկան, ինչպես նաև այն չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության և պատմամշակութային հուշարձանների կամ դրանց սահմանների հետ:

Հանքավայրի հաշվեկշռային պաշարները 1976 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 04.08.1977 թվականի օգոստոսի 4-ի թիվ 231 արձանագրությամբ, A+B+C կարգերով 11880,2 հազ.մ^3 քանակով, այդ թվում՝ A կարգով 4850,5 հազ.մ^3, B կարգով՝ 2345,1 հազ.մ^3 և C կարգով՝ 4684,6 հազ.մ^3:

Տեղամասում պաշարները հաստատվել են թվով 5 հաշվարկային բլոկներով:

Հայցվող տեղամասի օգտակար հանածոյի պաշարները C1 կարգով կազմում են 309056,0 մ^3: Ընդհանուր մարվող պաշարների քանակը կազմում է 309056 մ^3, տարեկան մարվող պաշարների քանակը՝ 77264 մ^3, ընդհանուր նախագծային կորուստները՝ 207067մ^3 կամ 6,7 %: Արտադրական հրապարակի մակերեսը կազմում է 0,3 հա: Արտադրական հրապարակում տեղադրվելու է ջարդիչ տեսակավորող կայանք:

Բացահանքի կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև՝

8417102.083	4435959.258	8417599.676	4436053.981

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

8417101.485	4435960.127	8417585.253	4436049.291
8417085.727	4435977.445	8417558.292	4436041.940
8417032.142	4436067.992	8417535.454	4436036.942
8417004.633	4436126.101	8417507.891	4436030.966
8416986.842	4436184.618	8417486.838	4436026.938
8417046.953	4436166.794	8417485.278	4436036.086
8417141.027	4436067.668	8417479.243	4436052.882
8417176.941	4436185.936	8417463.727	4436054.174
8417220.005	4436167.414	8417431.834	4436051.591
8417220.005	4436177.925	8417379.445	4436041.584
8417704.245	4436144.812	8417336.364	4436027.691
8417698.000	4436138.000	8417244.357	4436033.778
8417633.166	4436053.217	8417242.756	4435997.105
8417624.844	4436054.029	8417140.808	4435980.162
8417613.663	4436055.075	8417102.083	4435959.258

Ջանֆիդա տեղամասի օգտակար հանածոյի շերտի միջին հզորությունը կազմում է 6,86 մ: Տեղամասում հողաբուսական շերտը բացակայում է, քանի որ հանքավայրի տարածքը նախկինում շահագործվել է:

Տեղամասի ծառայման ժամկետը 4 տարի է:

Բացահանքի ցուցանիշերն են՝

- կորզվող պաշարները վերջնական եզրագծում ՝ 288349,3 մ^3,
- տարեկան կորզվող պաշարները՝ 72087,3 մ^3,
- մակաբացման ապարների տարեկան ծավալը՝ 0 մ^3,
- մշակման միջին խորությունը՝ 3,6 մ,
- ընդհանուր օտարման տարածքը՝ 8,5 հա,
- աշխատանքային օրերի թիվը՝ 260 օր, օրական մեկ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավազակոպճագլաքարային խառնուրդի արդյունահանումն իրագործելու նպատակով կատարվելու են նախապատրաստական աշխատանքներ՝ մոտեցող ավտոճանապարհի կարգաբերում՝ 1325 մ^2, արտադրական հրապարակի կարգաբերում՝ 3000 մ^2:

Տեղամասի լեռնատեխնիկական պայմանները բավականին բարենպաստ են այն բաց եղանակով մշակելու համար: Հանքավայրի մշակումը նախատեսվում է իրականացնել միակողմանի, համատարած, ներքևից շերեփման մշակման համակարգով: Հանույթային աշխատանքներն իրականացվելու են էքսկավատոր - ավտոինքնաթափ համալիրով: Արդյունահանված օգտակար հանածոն տեղափոխվելու է տարածքում մոտ 850 մ հեռավորության վրա գտնվող ՋՏ կայանք: Պատրաստի հումքը

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կպահեստավորվի արտադրական հրապարակի 150 մ² մակերեսով տարածքում: Արտադրական հրապարակից ավազը տեղափոխվելու է սպառողների ավտոինքնաթափերով:

Ջանֆիդայի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից ջրաբերուկային նստվածքները, ավազն ու կոպճագլաքարերը, ինչպես նաև ուշ չորրորդական հասակի ավազակավային ապարները: Օգտակար հաստաշերտը ներկայացված է տարահատիկ ավազներով և տարբեր մեծությամբ կոպճագլաքարերով: Օգտակար հանածոն ներկայացված է ավազակոպճագլաքարային խառնուրդով, որի հզորությունը կազմում է միջինը՝ 3,6 մ:

Արդյունահանման աշխատանքների ավարտին կիրականացվի խախտված տարածքների ռեկուլտիվացիա, որի մակերեսը կազմում է 8,8 հա: Համաձայն Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1643-Ն որոշման պահանջների, որպես խախտված հողերի ռեկուլտիվացման ուղղություն ընտրվել է շինարարական ուղղությունը՝ հաշվի առնելով հայցվող տարածքում հողի բերրի շերտի բացակայությունը: Քանի որ հանքավայրի տարածքը նախկինում շահագործվել է, հողաբուսական շերտը բացակայում է, ուստի կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացումը հնարավոր չէ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը, ըստ հաշվարկների, կկազմի 1644355,7 ՀՀ դրամ, որը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Աշխատանքներն իրականացնելիս բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, որը տարածք է բերվելու պայմանագրային հիմունքներով՝ տեխնիկական ջուրը՝ ջրցանլվացող ավտոմեքենայով, իսկ խմելունը՝ ավտոցիստեռնով: Տարածքում առաջացող կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են բետոնապատ, անջրթափանց զուգարանում, որտեղից հեռացվելու են պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից: Շահագործման ընթացքում հնարավոր է նաև բիոզուգարանների տեղադրում: Տեխնիկական ջուրը օգտագործվելու է ջարդման-տեսակավորման գործընթացում՝ հումքի լվացման, փոշենստեցման և շրջանառու համակարգի լրասնուցման համար: Արտադրական հոսքաջրերը ուղղվելու են պարզեցման ավազան և մաքրումից հետո վերադառնալու են արտադրություն: Աղտոտող նյութերի արտահոսք բաց ջրավազաններ տեղի չի ունենալու:Հումքը ենթարկվելու է առաջնային ջարդման այտավոր ջարդիչում: Ջարդված ապարը տրվելու է քարմաղման՝ չոր եղանակով, որի արգասիքների մի մասը կազմում է խոշոր ֆրակցիան: Այն անցնելու է ռոտորային ջարդիչ, այնուհետև՝ քարմաղման: Դասակարգումը իրականացվելու է թաց եղանակով: Արդյունքում ստացվելու է 3 դասի խիճ և ավազ: Մանր դասը խյուսի տեսքով ուղղվելու է պարզարան, որտեղից պարզվածքը վերադարձվելու է դասակարգիչ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ազդակիր համայնքում (Ջանֆիդա բնակավայր) անցկացվել է

հանրային լսում: Հանրային լսման մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնել պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարների հետ, քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե, ինչպես նաև համայնքում իրականացվող աշխատանքներին օժանդակելու նպատակով տրամադրել տեխնիկական միջոցներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

- փոշեգոյացումը բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով ճանապարհների, աշխատանքային հրապարակի ինտենսիվ ջրցան տարվա դրական ջերմաստիճանի դեպքում՝ չոր և տաք եղանակին՝ օրական 3 անգամ,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարաների մեջ և տեղափոխում մոտակա աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,
- շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով ֆիլտրերի և կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում,

ջրային ռեսուրսների պահպանության նպատակով մակերևութային հոսքաջրերի բացառում, կեղտաջրերի հավաքում և հեռացում,

- շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և մեքենաների շարժիչների կահավորում խլացուցիչներով՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- հողային ռեսուրսների պահպանության նպատակով տեխնիկական միջոցների սպասարկումն իրականացվելու է հանքավայրի սահմաններից դուրս՝ սպասարկման մասնագիտացված կետերում,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ աշխատանքների ավարտից հետո:

Տեղամասի շահագործման ընթացքում «Դավա շինտրեստ» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտ արտանետումների (ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի երկօքսիդ, մուր, ծծմբային անհիդրիդ, փոշի) պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ,
2. աղմուկի և թրթռումների մակարդակի պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ,
3. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես՝ չեզոքացուցիչ սարքավորումների վիճակի մշտադիտարկումներ՝ տարեկան 4 անգամ,
4. բացահանքի հարակից տարածքներում հողային ծածկույթի մշտադիտարկում, նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, տարեկան մեկ անգամ,

օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ամենօրյա զննման միջոցով,

5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ նվազագույնը երկու տարին մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 800000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հանքի փակման աշխատանքների ընթացքում և փակումից հետո ևս նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է՝

1. առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման դեպքում ապահովել լրացուցիչ կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
2. իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,
3. թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան,

4. աշխատանքների ավարտից հետո իրականացնել ռեկուլտիվացիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

5. ապահովել միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անցանելիությունը և բացառել որևէ բացասական ազդեցություն,

6. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումների ծրագրում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԴԱՎԱ ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ջանֆիդա տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան